ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՍԻ-ԼԵ-ՄՈՒԼԻՆՈ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆԴՐԵ ՍԱՆՏԻՆԻԻՆ

Սեպտեմբերի 1-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Իսի-լե-Մուլինոյի քաղաքապետ Անդրե Սանտինիին: Անդրե Սանտինիի գլխավորած պատվիրակությանն ուղեկցում էր նույն քաղաքի հայոց հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Մյուռոն ծ. վրդ. Գըվըգյանը:

Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց մեծարգո հյուրին հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Նորին Սրբությունն իր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին և Ֆրանսիայի պետությանը հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած եղբայրական սիրո համար: «Թող Աստված պահի ու պահպանի Ձեզ, օրհնի Ձեր բոլոր մտածումներն ու գործերը, որոնք ուղղված են Ֆրանսիայի ժողովրդի բարօրությանը և Ձեր երկրի շինությանն ու զորացմանը»,- մաղթեց Հայոց Հայրապետը:

Իսի-լե-Մուլինո քաղաքի քաղաքապետ Անդրե Սանտինին իր հերթին խորին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար՝ խոսելով իրենց ապագա ծրագրերի մասին՝ կապված Էջմիածին քույր քաղաքի դպրոցների և ընդհանրապես Հայաստանում բարձր տեխնոլոգիաների զարգացման գործում իրենց ցուցաբերելիք նպաստի մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 6-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամներին՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ տիար Մանվել

Բաղալյանի: Վերջինս, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Հայոց Հայրապետին ծանոթացրեց խորհրդի անդամների հետ՝ ներկայացնելով իրենց նպատակներն ու գործունեության ոլորտները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձր գնահատելով նորաստեղծ այս խորհրդի գործունեությունն ու պատասխանատու դերը կառավարման համակարգում, բարի երթ մաղթեց նրանց: «Ձեր գործը, Ձեր աշխատանքը պատվախնդրությամբ և անաչառությամբ կատարե՛ք, հայրենիքի շահերի գերագույն գիտակցությամբ առաջնորդվե՛ք, որպեսզի միշտ օրինության արժանանաք»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈԼՈՇԻՆԻՆ

Սեպտեմբերի 18-ին Վեհափառ Հայրապետն ընդունեց ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի աշխատակազմի ղեկավար Ալեքսանդր Վոլոշինին:

Հանդիպման ընթացքում խոսվեց հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների շուրջ:

Նորին Սրբությունը նշեց, որ հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Հայոց Կաթողիկոսները մշտապես եղել են այդ բարեկամության ջատագովները, իսկ հայ ժողովրդի պատմության դժվարին պահերին հաճախ ստանձնել են նաև առաջնորդող դերակատարություն այդ բարեկամության ամրապնդման գործում: Վեհափառ Հայրապետը միաժամանակ իր ուրախությունը հայտնեց, որ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունն այսօր արդեն օրավուր զարգանում է պետական մակարդակով:

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՀԱՓԱՌՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՄՑԽԵ - ՋԱՎԱԽԵԹԻԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Սեպտեմբերի 25-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սամցխե-Ջավախեթիում Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլուն:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը և Թ. Մոսիաշվիլին քննարկեցին փարածաշրջանային խնդիրներին, ինչպես նաև երկու ազգերի միջև բարեկամության և համագործակցության զարգացմանն առնչվող հարցեր:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՐԱՏՈՎԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սարատովի երկրամասի նահանգապետ Դմիտրի Այացկովին:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ուղղափառ ժողովուրդների բարեկամության ու օրավուր սերտացող կապերի մասին: Պրն Այացկովը Նորին Սրբությանը վստահեցրեց, որ հայաշատ Սարատովում հայերն ապրում են ապահով՝ կարողանալով պահպանել իրենց լեզուն, հավատքը, մշակույթն ու ազգային ավանդույթները:

Նահանգապետը Վեհափառ Հայրապետին պատմեց նաև երկրամասի հոգևոր կյանքի մասին՝ շեշտելով հայ բնակչության բարեպաշտ մասնակցությունը այդ կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ